

ՏԱՍԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

ՄՇԱԿ

Տարեկան շինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայնակ և հարգալից մեջ:

Օտարապետացիք չիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրությունը բաց է առաօտիկ 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարությունը ընդունվում է ամեն կնիքով:

Հայտարարությունների համար գնորդում են
խրատանկար քաղին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. Բ. Ն.

(ՏԱՍԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով ԱՄՆՆ ՕՐ (բացի տոն և տոներին հետևող օրերից):
ՊՐՕԳՐԱՄԱՍ. I. Տեղեկան կարգադրություններ, II. Առաջնորդող յոդուածներ, III. Ներքին տեսություններ, IV. Արտաքին տեսություններ, V. Խառն լուրեր, VI. Հեռագրեր, VII. Ֆելիտոն և Բանասիրական, VIII. Ցայտարարություններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կես տարվանը 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3 ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ:
Գրվել կարելի է խմբագրություն մէջ հետևող հասցեով. Тифлисе, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թող իրանք մտածեն:—Ներքին տեսությունները Գործում օրիորդական պրոգնոստիկայի բացման մասին: Նամակ Բագրեյ: Նամակ Խրադրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսությունները Գործում օրիորդական պրոգնոստիկայի բացման մասին: Նամակ Բագրեյ: Նամակ Խրադրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսությունները Գործում օրիորդական պրոգնոստիկայի բացման մասին: Նամակ Բագրեյ: Նամակ Խրադրին:

ԹՈՂ ԻՐԱՆՔ ՄՏԱԾԵՆ

Այս րոպէիս ամբողջ թիֆլիսը հետաքրքրող հարցը այն քննությունն էր, որ ձայնաւոր Օուբալովի առաջարկութեամբ նշանակվեցաւ զոււմայի կողմից քաղաքային գանձարանի վրա:

Քննությունից երեւաց որ հաշւապահութիւնը մեր քաղաքային վարչութեան մէջ ամենանահապետական է, կամ աւելի լաւ է ասել ոչինչ հաշւապահութիւն չը կայ:

Գանձարանի մէջ փողը պակաս գտնվեցաւ, քան թէ սպասելի էր: Աւարչութեան բոլոր անդամները, քարտուղարը, բոլոր ծառայողները չորս, հինգ ամիս առաջ կանխիկ էին վեր առել իրանց ռոճիկները և այդ ռոճիկները ոչ մի տեղ արձանագրված չէին վարչութեան մատենաների մէջ, այլ գտնվեցան միայն ստացականների, կամ որ և է դօկումենտների տեղ թղթերի կտորներ, առանց ստացման թւի, և այլն:

Պատմում են, թէ և մենք հրաժարվում ենք այդ տեսակ պատմածներին որ և է հաւատ ընծայել, որ ռոճիկները ամենեւին տուած չէին կանխիկ, այլ իբր թէ քաղաքային վարչութեան անդամները, երբ գանձարանի վրա քննությունը յանկարծակի կերպով նշանակվեցաւ, վճռեցին կասկային պակասորդը լրացնելու իսկ այն մեր ձայնաւորները,

նպատակով ձեռի համար բաժանել իրանց մէջ պակաս լինելու գումարը, որպէս թէ նրանցից իւրաքանչիւրը մի քանի ամսվայ ռոճիկը կանխիկ էր ստացել: Դրանով են բացատրում պատմողները, որ կանխիկ վեր առած ռոճիկների գումարի նշանակելը կասկայի մատենաներում անհնարին եղաւ, որովհետեւ նոյն երեկոյ, երբ զոււմայի կարգադրութեամբ վճռվեցաւ յանկարծակի վերաքննութիւնը, գանձարանը իր բոլոր գրքերով կնքվեցաւ:

Մենք կրկնում ենք որ մենք այդ տեսակ լուրերին հրաժարվում ենք հաւատալ և աւելի հաւանական ենք համարում այն, որ առհասարակ մեր քաղաքային վարչութեան հաշւապահութիւնը անկարգ էր, իսկ անդամների յարաբերութիւնը դէպի գանձարանը չափից դուրս նահապետական և, եթէ կարելի է ասել, ընտանեկան էր, այնպէս որ երբ պարոնները կամենում էին, միշտ հնար ունէին գանձարանից, առանց ստացականի, իրանց մի քանի ամսվայ ռոճիկները կանխիկ ստանալու:

Չը նայելով քաղաքային ղեկավարների այդ տեսակ օտարոտի և բուն ընտանեկան յարաբերութեան դէպի քաղաքային գանձարանը, երբ զոււմայի վերջին նիստի ժամանակ վերաքննող յանձնաժողովը ներկայացնում էր իր զեկուցումը, գտնվեցան բազմաթիւ ձայնաւորներ, որոնք յանձն առան պաշտպանել քաղաքային վարչութեան հաշւապահութեան ձեւը, հաւատացնելով, որ այդ հաշւապահութիւնը օրինակելի է: Նշանաւոր է, որ այդ անկանոն հաշւապահութեան դէմ ամենից քիչ բողոքեցին նոյն կասկային պակասորդը լրացնելու իսկ այն մեր ձայնաւորները,

որոնցից, որպէս մասնագէտներից, մենք ամենից աւելի իրաւունք ունէինք սպասել այդ տեսակ անհոգ, անկանոն, անճիշդ և փտանգաւոր հաշւապահութեան ձեւի խիստ, արդարադատ, անխնայ քննադատութիւն և դատաւարտութիւն, քանի որ նրանց, այդ մասնագէտներից, ամենից լաւ յայտնի պէտք է լինի թէ ինչ բան է կանոնաւոր և ինչ բան է անկանոն հաշւապահութիւն:

Օուբալովի խօսքերի և բողոքների վրա նիստի ժամանակ ոչ ոք չէր կամենում ուշադրութիւն դարձնել և դուրսն փռեց առանց հետեւանքի թողնել գործը, անցնելով հերթական հարցերի: Տեղական ռուս լրագիրները լսել են որ ձայնաւոր Օուբալով դիտաւորութիւն ունի, այդ պատճառով, զանգաւորել նահանգական վարչութեանը զոււմայի, իր կարծիքով, ապօրինի վճռի դէմ:

Մենք մեր կողմից միայն հետեւալ հարց կառաջարկենք: Եթէ, ճշմարիտ է, քաղաքային վարչութիւնը սյուքուն անկանոն կերպով է տանում իր գործերը, այդքան անկանոն և անհոգ կերպով պահում է գանձարանի հաշիւները, եթէ նրա մատենաներն ու հաշիւները այդքան խառն և անճիշդ են, ի՞նչ երաշխաւորութիւն կարող է ունենալ հարկատու քաղաքացին, որ քաղաքային վարչութեանը իր վճարվող տուրքերը կանոնաւոր և օրինաւոր կերպով են պահանջվում, ի՞նչ երաշխաւորութիւն կարող ենք ունենալ մենք ամենքս, որ մեզանից մինից պակաս չէ պահանջվում, իսկ միւսից աւելի, քան թէ մենք պէտք է մոցնենք քաղաքային գանձարանը, վերջապէս ի՞նչ երաշխաւորութիւն ունենք, որ մեզանից շատերից երկու, երեք անգամ չեն պահանջվում մի և նոյն վճարները:

Չը պէտք է մոռանանք, որ մեր քաղաքային գործերի ղեկավարները, այդ բոլոր պարոնները, որոնք, ինչպէս յայտնվեցաւ, հասկացողութիւն չունեն ոչ թէ միայն կանոնաւոր, բանկային հաշւապահութեան մասին, բայց մինչև անգամ ամենափոքր հասկացողութիւն էլ չունեն ամենահասարակ, մեր անգրագէտ խանութատէրերից գործածվող հաշւապահութեան մասին, որ այդ բոլոր պարոնները ուսում ա-

ռած, լուսաւորված, բարձրագոյն ուսում ստացած մարդիկ են:

Այժմ թող քաղաքային ազգայնակութիւնը ինքն մտածէ ու դատէ. արդեօք հնարաւոր է իրան մեծ յոյսեր դնել իր խնտելիկեցիկայի վրա, որ նա իր ամեն հասարակական գործերում իր համար ղեկավար է ընտրում և որին նա իր ամեն գործերն է յանձնում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՊՐՕԳՐԱՄԱՍԻ ԲԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Կովկասեան ուսումնական շրջանի պ. հոգաբարձուի թոյլտուութեամբ հասարակական և մասնաւոր միջոցներով Գորի քաղաքում բացվում է չորս դաստանից և մի պատրաստականից բաղկացած օրիորդական պրոգնոստիկա:

Հոգաբարձական ժողովի կարգադրութեամբ պրոգնոստիկան բացվելու է օգոստոսի 30-ին: Ննդներն ու ազգականները, որոնք կամենում են իրանց աղջկաներին կամ ազգականներին դաստիարակել նոյն պրոգնոստիկայում, սոյն յայտարարութիւնը հրատարակելուց յետոյ մինչև օգոստոսի 25-ը, կարող են հասարակ թղթի վրա գրված խնդիրը տալ հոգաբարձական ժողովի պ. նախագահի անունով, որ է Անդրկովկասեան ուսումնական դպրանոցի կառավարիչը: Խնդիրքի հետ կցվում է նաև մետրիքականի քաղաւածը կամ վկայականը: Առաջին տարում բացվելի պրոգնոստիկան ունենալու է պատրաստական և առաջին դասատուներ, նաև երկրորդը, եթէ յարմարութիւն ունեցող ցանկացողները 15-ից պակաս չեն լինի Ցարեկան վճարը պարտաւորիչ առարկաների համար լինելու է: պատրաստականում 15 րուբլի, առաջում 20 ր., երկրորդում 30 ր.: Փողերը պիտի առաջարկվին ամեն կէս տարուայ համար կանխիկ—օգոստոս և յուլիար ամիսներում: Երեխաները բերվում են ուսումնարան օգոստոսի 25-ին նոյն ուսմանը համապատասխանող դասարաններում տեղադրելու համար: Պատրաստական դասարանում ընդունվում են նաև բոլորովին անգրագէտ աղջկաներ 7-ից մինչև 12 տարեկան հասակի, իսկ միւս դասարաններում ըստ հարցաքննութեան 10—14 տարեկանները:

Օտարաքաղաքացիք կարող են իրանց երեխաներին զետեղել օրիորդ Խորշիչայի պանսիոնում—առանձին պայմանով փոխադարձ համաձայնութեամբ:

Պրոգնոստիկայի պարտաւորիչ առարկաներին պատկանում են կրօնագիտութիւն ուղղափառ և հայ-լուսաւորչական դասականութեանց, ռուսաց, վրաց և հայոց լեզուներ, թուրքականութիւն, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, բնագիտութիւն, վայելչագրութիւն, նկար-

չութիւն, մարմնամարդութիւն, պար, երգեցողութիւն և ձեռագործ: Կամաւոր առարկաների համար, այսինքն գաղղիներէն և գերմաններէն լեզուներն ու երաժշտութեան համար նշանակվում է առանձին լրացուցիչ փճար, որի քանակութիւնը կախված կը լինի այս երեք առարկաներից մէկը ուսանել ցանկացողներ թուից: Պրօգրմնագիտի ուսումնական ընթացքը բոլորովին համապատասխան կը լինի Քիֆիսի օրիորդական պրօգրմնագիտի նախագծին, որպէս զի այն օրիորդները, որոնք կը ցանկանան իրանց ուսումը շարունակել Քիֆիսի օրիորդական գիմնազիայում—կարողանան ուղղակի Վ Դասարանը մտնել:

Մտադրութիւն կայ ապագայում նոյն պրօգրմնագիտի մէջ բաց անել նաև մանկավարժական դասարաններ—երկու տարւայ ընթացքով, որպէս զի ցանկացողը կարողանան իրաւունք ստանալ ուսուցչուհու պաշտօններ կատարելու քաղաքի կամ գիւղերի սկզբնական դպրոցներում: Պրօգրմնագիտի կառավարչուհի հոգաբարձական ժողովից միաբերան ընտրված է իշխանուհի Մարիամ Գրիգորեան Մակայեվա, որ իր ուսումը ստացել է Պետերբուրգի առաջին օրիորդական գիմնազիայում և յայտնի է արդէն իր մանկավարժական փորձառութեամբ:

ՆԱՍՏԱԿ ԲԱՐՈՒԻՅ

Յունվարի 19-ին
Որպէս կարգադրող Բագուի մէջ 7-ին յունվարի տրված հայոց ներկայացման, ես, համաձայն ներկայացման մէջ մասնակցած երկտասարդութեան ցանկութեան, պատիւ ունեմ ուղարկել ձեզ 231 թուրք, փոստի ծախսը հանած, կցելով այդ իմ նամակին՝ և ներկայացման հաշիւը, որ և խնդրում եմ տպագրել ձեր լրագրում:

Յունվարի 7-ին Բագուի Ժողովարանում յօգուտ վանի սովատանջների և Մարգարիտական ընկերութեան գրադարանի տրված հայոց ներկայացման հաշիւը, որի գուտ արդիւնքը հաւասարապէս բաժանվեցաւ երկու մասի վրա:

Պատրաստված տոմսակները 648 թուրք գումարի մնացին չը ծախված 16 տոմսակ, իւրաքանչիւրը 1 թ. 50 կ. քնի, և 6 տոմսակ 1 թուրքանոց, բոլորը 30 թուրք գումարի ծախվեցան սովատանջների 618 թուրքու, աւելորդ արժուների համար ստացվեցաւ 12 թուրք, խորեից 9 թ., ափիշաններից 2 թ. 30 կ., աւելորդ ստացվեց 1 թ. Ընդամենը 642 թ. 30 կ.:

Ծախսը եղել է: Հաշվով տրված նոր դեկորացիայի նիւթերի համար 31 թ., դեկորատորին և ընտանիքներին 20 թ., հիւանդին 3 թ., ափիշաններ և տոմսակներ տպելու, կցցնելու և տարածելու համար 20 թ., երաժշտութեանը 30 թ., լուսաւորութեան համար 27 թ., պարիկներին 8 թ., 13 դիւթին արժուների վարձ 13 թ., ծառաներին 11 թ., զգեստի համար 3 թ., պիէսաները բերել տալու համար հեռագիրների վճարը 6 թ. 60 կ., մանր ծախսերի համար 5 թ.: Ընդամենը 177 թ. 60 կ.:

Ուրեմն գուտ արդիւնք մնում է 464 թ. 70 կ., որ բաժանելով երկուսի վրա, կը մնայ 232 թ. 35 կ., իսկ փոստի ծախսը հանելով 231 թուրքը, որ և ուղարկվում է սորա հետ «Մշակի» խմբագրութեանը, յօգուտ վանի սովատանջներին յատկացնելու համար: Միւս կէսը պատկանում է «Մարգարիտական» ընկերութեան գրադարանին:

Ներկայացմանը մասնակցած հայ երկտասարդութիւնը իւր ի սրտէ հնորակալութիւնն է յայտնում պ. Գօնչարով արտիստին, այն ջանքերի համար, որ պարոնը, որ և է վարձից հրաժարվելով, գործ դրեց բնմը կազմակերպելու և նոր դեկորացիաները պատրաստելու համար:

Ս. Անտօնով

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 3 փետրվարի
Անցեալ յունվարի 23-ին արուեստագործների ժողովարանի դաշխնում տուած համաժողովում

նեկան երեկոն, որ նշանակված էր յօգուտ Կ. Պօլսոյ Միացեալ ընկերութեան, տուեց եկամուտ 442 թ.:

Դուրս հանելով այդ գումարից մուգիկայի, սազանդարների և բուֆետի ծախսը—քնդամենը 124 թ. 50 կ., մնացեալ 317 թ. 50 կ. ուղարկելով ձեզ, խնդրեմ տնօրինէք հառուցանելու ընկերութեան:

Զեմ կարող խորին հնորակալութիւնն չը յայտնել արուեստագործների կուբի ժողովին, որի ներկայացուցիչները հասկանալով այսպիսի գործոց նպատակը ժողովարանի դաշխնը և սեղանատուները ձրիաբար առաջարկեցին երեկոյի համար բացի լուսաւորելուց, որի ծախսը ընդամենը 25 թուրքի ևս ընդունեցին ինձ վրա. մի և նոյն ժամանակ կը յայտնեմ պ. Մարտիրոսեանցին իմ հնորակալութիւնս, որ նա ապեց տոմսակները առանց վարձատրութեան:

Աղէքսանդր Մէլիք-Փաշայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հարաւ օր, փետրվարի 7-ին ուղարկեցինք Կիւլչենիկան եղբայրների առևտրական տան ձեռքով, որի ներկայացուցիչն է Քիֆիսում խուպիսերեան Կարապետ աղան, 1000 թուրք յօգուտ Կ. Պօլսի «Միացեալ ընկերութեան»:

Մեզ խնդրում են յայտնել որ փետրվարի 12-ին, հինգշաբթի օր լինելու է Արծրունու թատրոնում ուսուց թատրոնական ներկայացում, բարեգործական նպատակով, որին մասնակցելու են ուսուց թատրոնական խմբի ամենալաւ ոյժերը: Կը ներկայացնեն Հայաժինսկու «Փօֆան» նոր պիէսան, որ մեծ ընդունելութիւն գտաւ Մոսկվայում և Ս. Պետերբուրգում:

Ինչպէս յայտնի է ընթերցողին, փետրվար ամիսը սկսած այլ ևս լինելու չէ Քիֆիսում ուսուցչաւ, այլ նրա տեղ լինելու են ուսուցչ զբոսաւարտական ներկայացումները: Պ. Պալմ արդէն տպված յայտարարութիւններով յայտնել է թէ օվբեր են լինելու թատրոնական խմբի մասնակցողները: Գերասիմովներին թելում մենք կարգադրեմ և Նեմկով-Բալի տիկնոջ անունը:

«Русский Курьер» լրագրում կարգում ենք, որ Նորին Կայսերական Բարձրութեան Կովկասեան փոխարքայի առաջարկութեամբ, կառավարութիւնը «գիտաւորութիւն ունի բնակեցնել Կարսի նահանգում մի քանի հազար ռուս երկրագործ ընտանիքներ:

Մայրաքաղաքների ուսուց լրագրութիւնը լի է հանդուցեալ Գոստոնիսկի մատենադրութեանը: Մի ժամանակ Գոստոնիսկի մեծ հոշակ ունէր ուսուցչ գրականութեան մէջ: Նրա բոմանները, մանաւանդ որոնք հասարակական և իրաւաբանական նշանաւոր հարցեր էին քննադատում, ինչպէս օրինակ «Задиски мертвого дома» և «Преступление и наказание» որոնցից առաջինի մէջ քննված է բաժնատիրութեանը կամ արտոգրվածների դրութիւնը, իսկ երկրորդը յանցանքի հոգեբանական քննութիւն է, մեծ արձագանք էին գտել իրանց ժամանակին ուսուց հասարակութեան մէջ: Բայց վերջին տարիները Գոստոնիսկի ընկալ հիւանդոտ միտախնդրի մէջ է կորցրեց իր բոլոր հայեացքների թաքնութիւնը, իր նախկին առողջ դատողութիւնը: Նրա թաղման հանդիսին ներկայ էին Ս. Պետերբուրգի բոլոր թէ արական և թէ իգական դպրոցները, համալսարանը, բժշկական ակադեմիան, տեխնոլոգիական դպրոցը, բանտի վարչութեան ներկայացուցիչները, իրաւաբանական ընկերութիւնները, Մոսկվայի պատգամաւորութիւնը, գործընկեր ընկերութիւնը, Ս. Պետերբուրգի բոլոր թատրոնների դերասանները, իգական բժշկական դպրոցը և այլն և այլն:

Կառավարութիւնը նշանակել է Գոստոնիսկու այրիին 2000 թուրք տարեկան թոշակ նրա ամբողջ կենքի համար, իսկ հանգուցեալի գուակաները ընդունված են դպրոցներում թաղաւորական հաշվով:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՅ մեզ գրում են, որ այդտեղ

հմուտ բժիշկ չը լինելու պատճառով այլ և այլ հիւանդութիւններ չտու գոհեր են տանում:

Մեզ գրում են որ Նոր-Բայաջէի հայոց հոգևոր դպրոցը շատ անմխիթար դրութեան մէջ է: Տեսուչը ամիսներով չէ երևում դպրոցում, իսկ հոգաբարձուները միայն այն ժամանակ են ներկայանում, երբ հարկաւոր է աշակերտներից վարձ ստանալ:

Վ.ՆԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՅ մեզ գրում են որ յունվարի 24-ին այդտեղ հայոց թատրոնական ներկայացումն է եղել: Խաղացին «Շուշանիկ» ողբերգութիւնը և «Բանի ամուսնութիւն» կատակերգութիւնը: Ներկայացումն շատ անաջող անցաւ:

Այն լուրը որ իբր թէ վառաժարութիւնը դիտաւորութիւն ունի այլ ևս չը թույլ տալ նոր լրագրիչների հիմնվելու Ռուսաստանի մէջ, սուտ յայտնվեցաւ: Գունվար ամսին Ռուսաստանի այլ և այլ գաւառական քաղաքներում թույլ տրվեցան մինչև 15 նոր լրագրիչներ՝ ռուսներէն, գերմաններէն և էստոներէն լեզուներով:

Ջարմանալի հաշտեցնող ոյժ է մահը: Գեռ մի քանի չարախ սրանից առաջ ոչ մի ուսուցչ լրագրի կամ ամսագիր չը կար որ չը յարձակվէր Գոստոնիսկու վրա նրա վերջին գրութեան համար, որոնք չնչում են միտախնդրի ոգով և անտրուկեան զբաղմունքով դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը: Ամենայայտնի լրագրիչները և ամսագիրները պարզապէս կասկած էին յայտնում որ Գոստոնիսկու ուղիղ հոգեկան անընդունելի է, ամբողջ ուսուցչ մասնը այն ծայրանշնութեանն է հասնում, որ մոռանալով հանգուցեալի ճշմարիտ գեղեցիկ և հանճարեղ հին գրվածները, հաւատացնում է որ Գոստոնիսկու միտաւոր կարողութիւնը մինչև մահը թաքն էր մնացել, հաւատացնում է որ նրա ամենալաւ գրութեանը նրա վերջին ստեղծածներն են, որոնց մի քանի չարախ սրանից առաջ նոյն մասնը խանգարված ուղեղի ծնունդ էր համարում:

Փետրվարի 8-ին վրաց թատրոնական խումբը կրկին Արծրունու թատրոնում «Փօֆան» պիէսան Նոյն երեկոն խաղացին և Ս. Դերեմեյի («Ջարակուսանը» վերնագրով վոգելիւր Այս վերջին թէ և տեղական կեանքից, բայց ֆրանսիական ոգով գրված և փոքր ինչ անբարոյական անհարկութիւններով մի պիէսա է: Ջարմանալի է թէ որքան քիչ հասկացողութիւն ունեն թէ հայ և թէ վրացի ընտանիքները, որ այդ տեսակ պիէսաներին բերում են իրանց հետ իրանց երեխաներին և նստացնում լոճաներում:

Ամբողջ ուսուցչ լրագրութիւնը խոսում է այն գեղեցիկների մասին, որոնք յայտնվեցան Կաղաւի նահանգում՝ այդտեղի նահանգապետ Սկարիաւտինի կառավարութեան օրով: Սկարիաւտին արդէն հրաժարական է տուել: Գայտնվեցաւ օրինակ, որ մեծ գողութիւններ էին լինում իրական Գլինադիայում, որի կառավարել տիկինը գողացած փողերը հասցնում էր նահանգապետի կնոջ, որ այդ փողերով շքեղ կերպով ապրում էր և ամենաշաւալ պատուէրներ էր տալիս Կաղանի մօրային մաքալիներուն: Իրան նահանգապետ Սկարիաւտինի կաշառակերութեան և գողութեան այլ և այլ տեսակների, բռնութիւնների, կամայականութեան ու գեղեցիկների թիւ ու համար չը կայ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԳՈՒՐԳԱՅԱՅ

Հայը իւրեանց անկախութեան ժամանակներն այլ և այլ ազգեր կը նսած են: Նոքա իւրեանց հայրենի երկրն մէջ մեծամասնութիւն կը կազմէին, տիրող ցեղն էին, և բացառիկ ոյժ գտնելով քաղաքական անկախութեան մէջ, անհակառակելի և գրեթէ ընական առաւելակը ուղիղ մի ունէին նոյն երկրին մէջ բնակող այլ փոքր ժողովրդոց վրայ, և ըստ որում հզօրը միշտ

տկարը կը նսած է այն ժամանակներն երբ տկարը, քաղաքակրթական յառաջդիմութեանց շնորհիւ, իւր անհատական գոյութեան համար դեռ գոյութեան ուրիշ երաշխաւորութիւններ չունէր, ուստի Հայը այլ երբեմն կը նսած են ուրիշ փոքր ժողովուրդներ որոց վրայ իշխանութիւն ունէին: Ստար երկրներն զաւով Հայաստանի մէջ հաստատուած գաղթականութիւնը ալ նոյն բաղդն ունեցած են: Արդ Հայը, իւրեանց անկախութիւնը կորսնցնելէ ի վեր, տուած են զայս: Հայը իւրեանց կարգին կը նսած են իշխանութեամբ կամ թուով հզօրացին ազգերէ: Այսպէս, յիշատակելով այն պարագայներն և եթ, որոց գործնական օրինակներն այժմ իսկ մեր աչաց ներքեւ ունիմք, Հայը արեւելեան և հիւսիսային արեւելեան Հայաստանի մէջ խառնուած են Վաւկասեան ցեղերու հետ, զիւսուորապէս վրաց հետ, և հազարաւոր վրացիներ կան այժմ որք գիտեն թէ իւրեանց նախահայրը Հայ էին: Հիւսիսային Հայաստանի մէջ և Հայաստանէն դուրս այլ տեղեր, Հայը թուրք եղած են հազարաւորներով այն բարեբաղդաբար մոռցուած ժամանակներն երբ իսլամութիւնը գիտու գոյութեամբ կը յառաջդիմէր: Վիսաւորապէս, Կարսի, Արտահանի, Կարնոյ և Տրապիզոնի նահանգաց թուրքերուն մի մեծ մասն այս տեսակէն են, որպէս կապացուցուի ոչ միայն պատմութեամբ, այլ և նոյնա դէմքով, աւանդութեամբ և մինչև իսկ լեզուով: Արեւմտեան Հայաստանի մէջ Հայը Յոյն եղած են, և Հայկական գաւառաց մէջ Յոյներն ընդհանրապէս Հայ սերունդէ լինել կը կարծուին: Բայց նոյն իսկ Հայաստանի մէջ, մանաւանդ Հայաստանի հարաւային մասանց մէջ, հազարաւորներով Հայը թուրք եղած են: Ապահովապէս կրնամք ասել թէ Տէրթիմի Գուրքը գրեթէ ամբողջապէս Հայ սերունդէ են, որպէս կապացուցուի բազմաթիւ նշաններով: Նոյն բանը կրնամք ասել վասպուրականի, Տարնոյ և Միջագետաց Գուրգերուն մի կարեւոր մասին համար այ: Այն Հայը որք դարեր առաջ քուրդացած են, այսօր գրեթէ անձնաշնչին են մեզ, թէ և յոյժ մեր ձաւորութիւն ունենան այլ և այլ նկատմամբ: Նոքա բռնութեանց ժամանակներն հզօրացոյցն ցեղի մի առջև տեղի տալով իւրեանց փրկութիւնը գտնել ուզած են: Այդ տեսակ բռնութիւնը այսօր չը կան: Բայց այն ժամանակներն կտակաւ վիճակն այժմ իսկ կը շարունակէ հարաւային Հայաստանի այլ և այլ գաւառաց մէջ: հազարաւորներով կը համրուին հարազատ Հայեր, որք ամեն կողմէ Գուրգերէն շրջապատեալ, հետզհետէ քուրդանալու վրայ են, արդէն կորուսած են իւրեանց մայրենի լեզուն, Հայկական սնունդները իսկ և այն քրիստոնէական կրօնը, որով և եթ կը զանազանին իւրեանց Գուրք դրացիներէն, յոյժ նսմ գաղափար ունին նորա վրայ: Այս Հոյներն են որ ԳՈՒՐԳԱՅԱՅ անուան ներքեւ կը ձանչուին: Նոքա կը բնակին Տարնոյ կողմէ ի յոյժ, ի Սասուն, ի Ռիզան, Լայն, վասպուրականի կողմէ ի Մոկս, ի Շատախ, յԱրբակ, Լայն: Միջագետաց կողմը, Տիւրքալէքի հարաւային գաւառներն, և ի Մարտին, ի ձգիլի, Լայն: Այս տեղերու Հայ ժողովրդոց նիւթական վիճակին խնդունութեան հաւասար բան մի և եթ կայ, այն ալ նոյն բարոյական և ազգային ողբալի վիճակին խնդունութիւնն է:

Արդ, եթ թող տամք որ իրաց վիճակն այսպէս շարունակի, այդ հազարաւոր Հայերն, — իւրեանց կտրիճութեամբ, տոկունութեամբ, հաւատարմութեամբ և այլ հանգամանք Հայութեան այդ ընտրեալոյն զա-

ապրիլից, — Ժամանակ անցնելով բոլորովին
պիտի կորուսին մեզ համար. նոքա որք
արդէն մեծագույն հեռացեալ պէտք է հա-
մարում չայ ազգութենէն, բոլորովին պի-
տի հեռանալ, և թերեւ դար մի չը բոլոր-
ուած, ոչ ոք պիտի կրնայ գանազանել զնո-
սա իւրեանց այն դրացիներէն, որք թէեւ
այժմ պաշտօնապէս Բուրդ են, բայց ան-
հաւանական չէ որ մի քանի դար առաջ
արդի Բուրդահայոց վիճակին մէջ էին մի-
այն . . .

Աւասիկ ազգային Շահ ու Չենի մի
պարզ խնդիր:— Եթէ թոյլ տամք որ այսօր
անուամբ եւթ չայ համարուած այս հա-
զարուոր Բուրդահայ բոլորովին Բուրդա-
նան, չայ ազգը նոյնքան վնասուած պիտի
լինի, նոյնքան անգամ պիտի կորսնցունէ:
Բայց եթէ միջոցներ խորհիմք և զործա-
դրեմք ուսուցանելու նոցա իւրեանց լեզուն,
ազգութիւնը, պատմութիւնն և կրօնը,
կարելի կը լինի փրկել զնոսա, և աւելորդ
է ասել թէ չայ ազգն աւելի ևս կը զօրա-
նայ նոյնքան ճշմարիտ չայեր ալ պարու-
նակելով:

Եթէ ազգային պահպանութեան ամենա-
փոքր դադարաւոր ու զիտուն ունիմք, այս
պարագային առջեւ մեր ընթացքը տարա-
կուսական չը կրնար լինիլ: Պէտք է ջանամք
փրկել զԲուրդահայս: Պէտք է աշխատիմք
զազգային այն հոսանքն, որում բռնուած
նոքա կ'ընթանան զէպի վերջնական կո-
րուստ իւրեանց ազգութեան: Միջոցները,
փառք չեաւն, չեն պակսիր այս լուսաւո-
րութեան դարուս մէջ: Արթուրեմք, զոր
մէք երէկ ընդհանուր չայ ազգին փրկու-
թեան միջոց կը համարէինք, ի մասնաւորի
փրկութեան միջոց է Բուրդահայոց համար.
տոքա յայտնապէս ազգին ամենէն աւելի
հիւանդ մասն են, և այն զեղն, հետեալար,
որ ազգին ամբողջութիւնը բուժելու պիտի
ծառայէ, ի հարկէ աւելի ստիպողական է
հիւանդագոյն անդամին համար:

Ձեռք կարծեր որ մեք առաջին եղած
լինիմք Բուրդահայոց սարսնակից կացու-
թեան վրայ ուշադրութիւն հրաւիրելու մա-
սին, թէեւ այս նկատմամբ ո՛ր և է երկ
մեր աչաց ներքեւ չէ ինկած դեռ: Բայց մի-
շե ցարդ ազգը լըծօրէն չէ աշխատած փրկ-
կել կորուսելու մօտ եղող իւր այս անդամ
ները: Ձեռք տեսներ որ ցարդ այդ նպատա-
կաւ մի հզօր ջանք եղած լինի: Խօսքը
մէջէն ինչ մ'նայ, բայց հրաշք է եթէ
փրկուի ազգ մի, որ աշխարհ անտարբեր է
իւր փրկութեան:

Եւ իրօք, հետաքրքիր եմք իմանալ թէ
ինչ կը հասկցուի Ազգ. փրկութիւն ասե-
լով, երբ թոյլ կը տամք որ ստիկն սովէ և
թշուառութենէ հարեւաւոր չայու տու-
ներ կործանին, անդին խոր տգիտութեան
պատճառաւ հազարաւոր չայեր Բուրդանան,
աստ հարեւաւոր չայեր իւրեանց ազգային
լեզուն մոռնան, անդ հազարաւորներ իւ-
րեանց ազգութիւնը կորսնցունեն: Մեք կը
հաւատամք ազգային փրկութեան. այլ ո՛չ
իրաց այս վիճակին մէջ . . .

Բուրդահայն, Բուրդահայոց արդի վի-
ճակին մէջ, փրկութենէ հեռի, մեր ազգին
մի կարեւոր մասին վերջնական ոչնչումը
միայն կը տեսնեմք, եթէ ընդ փոյթ դար-
ման չը տարուի այդ վիճակին:

(Կը չարունակվի)

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՒՄԵՐԻՑ

Վան. զեկտեմբերի 28, 80

Մեր մէջ մի գրուցուած կայ որ շատ յարմար
կը գայ թուրքերը տեղութեան բռնած ներկայ
ընթացքին, ականջն հանել աչք զնեյ. այս է

անհա թուրքերը ներկայ քաղաքականութիւն.
փաշա մը որ չէ կրցած այս ինչ քաղաքը լաւ
կառավարել զայն պաշտօնական անկու փոխա-
րէն, ուրիշ քաղաքի կառավարիչ կանուանէ
զայն, առանց մտածելու որ այս քաղաքը կա-
ռավարել չը գիտցողը, ուրիշ քաղաք մը ինչպէս
կրնայ կառավարել. այս գրութիւնի համեմատ,
չարաւթ քանի մը անգամ նախարարներ, եպար-
քոսներ կը փոխվին և սրանց կը յաջորդեն
այնպիսի անձինք, որք փոխանակ առաջիններէն
լաւ լինելու, աւելի գէշ կը լինին: Մասնաւոր-
աբար կը գրվին, յանձնաժողովներ կը կազմվին,
քովիսէներ կը դրվին զանազան քաղաքներ,
գաւառներ, և սոքա փոխանակ ժողովրդեան
ցաւերը մեղմացնելու, հարստահարութեանց կե-
ղեքմանց առաջն աւելնելու, ժողովրդեան ցաւե-
րը ակնաշնչ կը հանեն և աչքը կը դնեն: Ան-
ցեալ ամիսի մէջ իւրաքանչիւր գաւառի, քա-
ղաքի կառավարներ և կառավարիչներ, իւրեանց
իրաւասութիւնի տակ գտնված գիւղերում,
ընտանաց շատարութիւնին նայելով հայ, թուրք
և քրիւղ միւսերն ու նշանակեցին. նշանակված
միւսերն ալ այնպիսի մարդիկն են, որք փա-
խանակ ժողովրդեան ցաւերը մեղմացնելու, ա-
կանջն կը հանեն և աչքի մէջ կը դնեն:

Չարաւթ կը խաբուին անոնք, որք կը կարծեն
որ թուրքեան բարեկրթութիւնը պիտի մոյնէ
Հայաստանում, և Հայաստանում ընտանիք ժո-
ղովրդը պիտի կարենայ անգործ և խաղաղ
կեանք վարել տէր լինելով իր կենաց, իր պա-
տիւնի և իր ընկից և այլն և այլն: Անոնք որ
ստակն կը մտածեն, անոնք «Մեղու» խմբագրի
չափ խելք ունեցողներն են. ահա ինչ կը գրէր
նա իր 67 թիւ առաջնորդող յօդուածի մէջ.
«Շատերն տեսնելով հաճախաբար դիմադրու-
թիւնը զնոսորդիսի հարցումը, կարծում են որ
նախ ներքին բարեկրթութեանց և Հայաստանի
բարեկրթութեանց հարցումն էլ, նոյն դիմադրու-
թիւն կանն, և ամենայն ինչ իր հին գրութեան
մէջ թողնել կը յաջողի, բայց մենք կարծում
ենք որ այդ անհար է և այլն և այլն:

Մենք չը գիտենք թէ «Մեղու» ինչ պատ-
ճառաւ առաջի պաշտօնական կը հանդիսանայ
թուրքերը պէս մի մեղած և փոքրած տեղու-
թեան, որ թանգիմարտի հաստատութիւնն ցայսօր
ամեն ժամանակ խոտտումներ արած է բարեկր-
թութեան մոյնէլ Հայաստանում, հաւատի
նկատել իր ամեն հպատակները առանց նայելու
թէ ինչ կրծին և ինչ ազգութեանը կը պատկա-
նին նոքա, այն օրէն մինչև այսօր մենք չենք
տեսած որ թուրքեան իր արած խոտտումներն
գտնէ մէկ հազարերորդ մասը դարձադրել բա-
րեկրթութեան, այլ ընդհակառակն նա աշխատած է
և կաշխատի միշտ փոխանակ Հայաստանը բա-
րեկրթութեան, փոխանակ Հայոց արդար պահան-
ջութեանը գոհացնելու, խղիւղ հայոց իրաւունք-
ներ. նա աշխատած է և կաշխատի Հայկական
խնդիր այնպիսի կերպով մը լուծել որ քանի մը
ամսն մը քանի հայ միայն մնայ Հայաստա-
նում:

Անոնք որ քիչ մը թուրքերը անցնալ և ներ-
կայն խոտտաւորած են, անոնք որ գիտեն թէ
թուրքերը իշխանութեան տակ գտնուած այժ-
մեան քաղաքներ ինչ դիրքի մէջ կը գտնվին
այժմ, առաջ ինչ դիրքի մէջ էին, անոնք կը
համոզուին որ թուրքեան աւելելու և քանդելու
մէջ միայն վարժ է: Մի առաւ կայ մեր մէջք թէ
«Տաճկի ոտը կրկնած տեղը խոտ չի բուսնի»
բայց «Մեղու» խմբագրէն ամեն մարդ կը
խոտտուովին թէ այս առաւը բոլորովին ճիշդ է.
Թէեւ մեր նպատակը «Մեղու» նպատակը,
արարքները, գործները քննադատել չէ, բայց և
այնպէս հարկ կը համարեմք քանի մը խօսք
գրուցել:

Փափաղկել է որ «Մեղու» թուրքերը մոռնելով
հասարակաց կարծիքը չը պղտորէր համոզելով
ուրիշներին թէ «Մեղու» կազմէ որ հայերը բո-
ղոքակալ են ինչ կամ կաթիլիկ գտնանա: Արեւ
բան է, եթէ նա որոշած է «Մեղու» արտայայտա-
մարերին միշտ գէշ գրել «Մեղու» գրածները իրեն
համար նիւթ վերցնել «Մեղու» ձեռնակ ասածին
ու ասել, սա պատճառաւ միայն որպէս զի նիւ-
թեր չը պակսին: Իսկ եթէ դուք, «Մեղու», սա
պատճառաւ է որ կը ցածանաք, հոգ չէ, չարեւ-
նակեցէք գրել ինչ որ գրած էք մինչև այսօր.
բայց պարտքը հրապարակաւ խոտտուելու այս
բանը, իսկ եթէ դուք համոզուած էք որ ձեր
պաշտօնական գաղափարները «Մեղու» պաշա-
պաններին լաւ և խելքի պառկող, ուղիղ
բանի համաձայն է, առանց արժանապատուու-

թեանը դպչելու կը խնդրեմք որ մի քիչ խելք-
ներով ամիսիք, և մէյ մը մտածէք որ զուր-
ձեր արտայայտած միտքերով հասարակաց կար-
ծիքը պղտորելի դատ ուրիշ օգուտ մը չէք
անել:

Ինչպէս «Մեղու» որոշած է միշտ «Մեղու»
գէշ գրել, «Մեղու» գաղափարներն հակառակ
լինել, նոյնպէս թուրքեան էլ որոշած է հակա-
ռակ լինել այն ամեն բաներին, որոնցմէ կը կարծէ
բարեկրթութեան մը ծագել հայոց: Չը գիտենք թուր-
քեան ինչ պատճառի համար չուրեր որ Հայեր
վիճակագրութիւն անեն, կերակր թէ ասկից մի
վնաս կը հեռատեսէ իր գոյութիւնին. շատ մը
գիւղերի վիճակագրութիւններն կառավարութիւն
բռնած է իւր արդիւնքած մի բան. տեղւոյ ա-
ռաջնորդարան շատ աշխատեցաւ զանոնք ետ
առնելու, տակաւին չը յաջողեցաւ. և կերել
թէ յաջողելիք ալ չունի:

Այն գիւղերի վիճակագրութիւնն զատ զօրս
տեղւոյ կառավարութիւն վար գրած է, մնա-
ցեալ գիւղերի համագումարն եղած է.

Վան քաղաքում 491 տուն 1355 արու 1056 էգ
» Այգեւան 2395 » 7708 » 7280 »
Մահմադ 601 » 3366 » 3136 »
Հայոց ձոր 976 » 3687 » 3474 »
Ոստան-Գալաշ 819 » 3399 » 3216 »
Բզնունիք 568 » 1892 » 2245 »
Քաջբերդ 659 » 3073 » 2823 »
Թիմար 1786 » 6646 » 5023 »
Շատախ 1158 » 4499 » 3917 »
Մոկր 647 » 3031 » 2496 »
10100 » 38636 » 34666 էգ
73322

Համագումար կը լինի 73322 թէ արու թէ էգ.
մնացեալ գիւղերն ալ միտին հաշուելով 140000
կանգնի: Միայն Վաղարշապատի մէջ 140000
հատ հայ կայ. 90000 մէկը թողուք ծեր և
տղալ հաշուելով, մնացած 50000-ը ինչեր գոր-
ծել կարելի չէ արդեօք:

Վանցի

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ե Բ

Իմիջ Զօրայի «Նանա» բովանդակ պ. Վիլհամ
Բիւրնակ կազմել է մի դրամ և բովանդակ հե-
րոստէի Նանային այն ատիճան փոփոխու-
թեան է կ'ընթակէ, որ առաջին «Նանայի»
բնագրութեան նշանը էլ չէ մնացել: Այս օրե-
րում այդ դրաման արվեստ Ambigu թատրո-
նում մի անգամ յայտնուած է: Իմիջ Զօրայի այն հե-
ղինակներին է, որ կարծ ժամանակամիջոցում
արդէն մեծ անուն է հանել և իր ուղղութեամբ,
հակառակ բովանդակեան ուղղութեան, մի նոր
դպրոց է կազմել փրկական գրականութեան մէջ
և ունի արդէն շատ հետադիմեր թէ ճրարա-
յում և թէ ուրիշ երկրներում: Ում յայտնի չեն
Դօգէլ, Ֆլօրէր և Գօնիւր եղբայրները, զեղե-
ցիկ գրողները: Այդ հեղինակներին բոլոր գր-
քութեանը արդէն վաղուց թարգմանված են
ուսանելի լեզուով: Զօրայի աշխատակցած է ուսու-
«Вестник Европы» ամսագրում և իր զեղեցիկ
փորձիկ, կենդանի պատկերներով և կրիտիկա-
կան յօդուածներով վաղուց գրաւել է ուսու ըն-
թերցողների ուշադրութիւնը:

Նորերում արվեստ Comedie Francaise թատ-
րում Ալեքսանդր Գիլմայի մի նոր գրութիւն
«La Princesse de Bagdad» վերագրով: Չը նա-
յելով օտարոտի վերագրին, պիտեայի բովանդա-
կութիւնը այժմեան կեանքին է վերաբերվում:
Կա մի դժբաղդ բնական կեանքի նկարագ-
րութիւն է: Առաջին ներկայացումն շատ անա-
շտ լինեցաւ. դերասաններն ժողովրդը ան-
դադար ընդմիջում էր աստիկ չլինելով, մինչև
անգամ թոյլ չէին տալիս պիտեան մինչև վերջը
հասցնել: Մասնաւոր վրդովմած են եղել կանայք,
տեսնելով ընդմիջումը իրանց մասնաւոր կեանքի
ճիշտ նկարագրութիւնը և այն աղմկալի չլո-
ները վերաբերվում են կանայք ինտրիգային:
Բայց հեղինակը չէ վնասվում, համոզված լինե-
լով որ մի քանի ներկայացումներից յետոյ այդ
պիտեան զարմեալ աշողութիւն պիտեք է գտնի:
Գիլմայի պիտեաններն հետ մեր հասարակութիւնն
էլ փոքր ի շատ ծանօթ է: Թիֆլիսի թատրո-
նական խումբը ներկայացրած է նա պիտեանե-
րից. — «La Dame aux Camélias» և «Les idées de
Madame Aubray» (տիկին Օրբէի գաղափարները):
Այդ երկու պիտեաների մէջ էլ հեղինակը նը-
կարագրում է անբարոյական դասին պատկանող
կանայք, որոնք երբ կարողանում են անկեղծ
սիրել, ձգտում են իրանց շրջանից դուրս գալ
և հասարակութեան օրինաւոր անդամ դառնալ.
բայց նախապաշարունակներն հետ չը կարողա-
նալով պատերազմել, գոհ են գնում: Գիլմայի
առհասարակ ճնշված կանայք պաշտօնական է հան-
դիսացել միշտ և մասնաւոր վերջին ժամանակ-

ները: Բայց բովանդակ և թատրոնական պի-
տեաներից վերջին ժամանակ նա սկսել է և բը-
րօշխներով պաշտօնական կ'ընդ իրաւունքները:
Երկու ամիս սրանց առաջ նա հրատարակեց մի
գրքիկ «Les Femmes qui tuent et les Femmes
qui votent» (կանայք որոնք սպանում են և կա-
նայք որոնք քուէարկում են) վերագրով. որի
մէջ նա ամենայն պաշտօնական է հանդիսանում
կ'ընդ իրաւունքներին թէ բնականան, թէ հա-
սարակական և թէ պետական կեանքի մէջ:
Գիլմայի իր առաջարկին մէջ պարզ խոտտում-
վում է, որ նա մի ժամանակ «կ'ընդ իրաւունք»
բառով հակառակ էր կ'ընդ միայն բնական-
կան, եթէ կարելի է ասել «կ'ընդ իրաւունք»
և մինչև անգամ ծագելիս է եղել այն կանայք,
որոնք ձգտում էին զէպի ասելի բարձր իրա-
ւունքները: Այժմ Գիլմայի անկեղծօրէն հրաժար-
վում է իր ունեցած այդ սխալ կարծիքից և իր
պաշտօնականութեան ու պահանջութեան մէջ
մինչև անգամ ծայրայեղութեան է հասնում իր
գրութեան այն մասում, որ նա խոսում է
կ'ընդ միայն պաշտօնական մասին: Այդ գրքիկը
որ մեծ աղմուկներ գցեց ամենայն չըմանե-
րում, որոնք հետաքրքրվում են այդ հարցով,
արդէն թարգմանվեցաւ շատ լեզուներով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԵՆԵՐՈՒԹԵՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի: Երրորդ
բաժնի գործակալին կալանաւորելու մասին
հաղորդած լուրի վերաբերութեամբ «He-
rold» լրագիրը ասելացնում է, իբր թէ
այն անձը, որի բնակարանի մէջ կալանաւոր-
վեցաւ գործակալը, գեներալ Մեդեյեցիկին
սպանողներից մէկն է:

Կ. ՊՕԼԻՍ, 5 փետրվարի: Բէյրութի մէջ
պատահած վէճի պատճառով մահմետական-
ների և ուղղափառների մէջ, երբ կին, ու-
րոնցից մէկ մահմետական և երկուսը քրիս-
տոնեայ, սպանված են: Տաս մարդ վիրա-
ւորված են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 95 ռ. 35 կ., երրորդ 93 ռ. 25 կ.,
երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ. 25
կ., ներքին 5% տոմսին փոխառութեան
տոմսակը արժէ 224 ռ. 25 կ., երրորդ
223 ռ., արեւելեան առաջին փոխառութեան
տոմսակը արժէ 92 ռ. 75 կ., երրորդ 93
ռ., երրորդ 93 ռ., ոսկի 7 ռ. 73 կ.: Ռուս-
սաց 1 ռ. 1օնթիւն վրա արժէ 25,31 պէնս,
Վաստերգամի վրա 124 պէնս, ռուսաց 100
րուբլ համարողի վրա արժէ 215 մարկ 50
պֆ., ֆարիզի վրա 267 ֆրանկ 25 ան-
տիւն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի: «Голос»
լրագրին հաղորդում են Օդեսայից փետր-
վարի 6-ից, որ երէկ սիվեցաւ նաւաղնա-
ցութիւնը տաք և պարզ եղանակի շնոր-
հիւ: Բէյրութ բոլորովին մաքրվեցաւ սառու-
ցից: «Новое Время» լրագիրը հաղորդում
է. փետրվարի 5-ին, ձմեռային պալատի
մէջ եղած ճայթիւնի տարեդարձին, մադ-
թանք և հոգեհանգիստ կատարվեցան: Ժա-
մի 12-ին մադթանք կատարվեցաւ, որին
ներկայ էր թագաւոր Կայսրը կայսերական
տան բոլոր անդամներին հետ:

ՆՈՎՈՐՈՍԻՍԿԱ, 6 փետրվարի: Գեներալ
Մալախովիցի գրութեան թուանշանների
ստուգումը, որ սովոր տուեց զեմսովոյ վար-
չութեանը հպատակելու համար երկարաց-
վեցան, ցոյց տուեց, որ երապագու-
թիւնները սխալ թուանշաններից են ստաց-
ված: Մասնաւոր վերադառնում է այստեղ
Ս. Պետերբուրգից: Ստաման Երանսկուտ-
սկի ուղեւորութեւն Ս. Պետերբուրգ, որտե-
ղից, ինչպէս ասում են, էլ չի վերադառ-
նայ: Կարծում են, որ նրան կարող են փո-
խարինել իշխան Իմերտինսկի, կոմս Իգ-
նատիւկ կամ գեներալ Վանսովսկի: Սերբիա-
կան ախտով հիւանդանալու մի քանի զէպ-
քեր են պատահել, մէկը մեռած է: Զեղ-
ձուներ են յայտնված կողակներին
ծառայութիւն ուղարկելու վերաբերու-
թեամբ և զանված է զիւղական կեղծված
վէճիւ: Այդ գործին մի քանի պաշտօնական
անձինք էլ են մասնակցիլ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԻՔԻՐ ԱՐԴԻՐՈՒՆԻ

